

կերուած հաւասարաթեւ խաչի որոշակի պատկանելութեան մասին, տեղին է, որովհետեւ, տուեալ դէպքում, խաչի ամենապարզ եւ տարածուած ձեւը պէտք է խորհրդանշէր պայքար ողջ քրիստոնէութեան դէմ, որը ծաւալել էր Շապուհ Բ-ն:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

1 Մովսիս Սորենացի Պատմութիւն հայոց, Աշխատութեամբ՝ Մ. Աբեղեանի եւ Ս. Յարութիւնեանի, Տփղիս, 1913, Գ-ԼԵ, Փաստոսի Բուզանդացու Պատմութիւն Հայոց, Սանկտ-Պետերբուրգ, 1883, Գ-ԾԵ, ԾԹ:

2 Հայ Ժողովրդի պատմութիւն, հտ. II, Երեւան, 1982, էջ 101:

3 К. В. Тревер, Художественное значение сасанидских монет, Труды отдела востока Государственного Эрмитажа, т. I, Ленинград, 1939, стр. 267; И. Рак, Мифы античного и средневекового Ирана, Санкт-Петербург - Москва, 1998, стр. 452; R. Göbl, Sasanian Numismatics, Braunschweig, 1971, p. 46.

4 Մովսէս Սորենացի, Գ-ԾԵ:

5 Ասորական աղբիւրներ. Օտար աղբիւրները Հայաստանի եւ հայերի մասին, թարգմանութիւն բնագրից, առաջաբան եւ ծանօթագրութիւններ Հ. Մելքոնեանի, Երեւան; J. Labourt, Le Christianisme dans l'Empire Perse sous la Dynastie Sasanide, Paris, 1904, p. 43.

6 Լ. Տէր-Պետրոսեան, Աբրահամ Սոստովանողի «Վկայք արեւելիցը», Երեւան, 1976, էջ 8-9:

7 Թովմայի վարդապետի Արծրունու Պատմութիւն Տանն Արծրունեաց, Սանկտ-Պետերբուրգ, 1887, Ա-Ժ:

8 Р. Н. Фрай, Наследие Ирана, Москва, 1972, ст. 307.

9 Մովսէս Սորենացի, Գ, ԼԶ:

10 Փաստոս Բուզանդ, Գ, ԺԶ:

11 R. Göbl, Sasanian Numismatics, Braunschweig-1971, p. 46.

12 В. Г. Луконин, Культура Сасанидского Ирана. Новые материалы и опыт исторической реконструкции, Москва, 1969, стр. 185-196.

13 А. Донини, У истоков христианства, Москва, 1989, ст. 218.

14 P. Braun, The Victorious Sings of Constantine: a Reappraisal, The Numismatic Chronicle 157, London, 1997, p. 56.

15 А. А. Нейхардт, Происхождение креста, Москва, 1956, ст. 48.

16 M-P. Fouchet, L'art de Byzance et de l'Islam, Paris/Bruxelles, 1979, p. 44.

17 R. Carson, Coins of the World, New York, 1962, p. 463; T. Higel, Garmisch-Partenkichen: Axumide Coinage: A Preliminary Typology, Newsletter of Oriental Numismatic Society 176, Bergambacht, 2003, p. 3

18 Ագաթանգեղայ Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1914, 736-745:



ՀԱՅ ԱԶԱՏԱՐՁԱԿՆԵՐԸ ԱՐՐԵՏԻՈՒՄ ՔԱՂԱՔՈՒՄ

Ջուստո ՏՐԱԽԵԱ (Լեչէի համալսարան, Իտալիա)

Պերեննիուսի գործատուները Արրեստիոսի կարեւորագոյն խեցեգործական արհեստանոցն էր եւ, հաւանաբար, ամենակարեւորը բոլոր նրանցից, որոնք արտադրում էին արրեստեան խեցեղէն, որն այսօր անուանում ենք իտալական terra sigillata: Արրեստիոսը քաղաքի արուարձանում, Չինչելլի վայրում, ինչ-որ ժամանակ հիմնուել էր մասնաճիւղ¹: Մ.թ.ա. I դարի երկրորդ կէսով եւ յաջորդ դարի առաջին կէսով թուագրուող ռելիեֆազարդ սափորների դրոշմապատկերները մեզ տալիս են այդ արհեստանոցի երկու պատասխանատուների անուններ. Marcus Perennius Tigranus եւ Marcus Perennius Bargat(h)es²: Անթնների ձեւերի տիպաբանութիւնը, ինչպէս նաեւ զարդաբանման ոճը վկայում են, որ այս անձերը համապատասխանում են արհեստանոցի գործունէութեան երկու տարբեր փուլերին, եւ որ Tigranus-ը եղել է Bargat(h)es-ից առաջ³:

Այս անձանց պաշտօնների եւ ծագման հարցերը լիովին պարզաբանուած չեն:

Գիտնականները համակարծիք են միայն Tigranus եւ Bargat(h)es անունների արեւելեան ծագման խնդրում: Օգիւստ Օքսէն առաջինն էր, որը ներկայացրեց Marcus Perennius Tigranus-ի մասին, ճիշտ է՝ մի քիչ հեռու գնացող, վարկած: Ըստ նրա, այդ արեւելցին հռոմէական քաղաքացի է դարձել ոմն Մարկուս Պերեննիուսի շնորհիւ, որը, սակայն, արհեստանոցի հետ առնչութիւն չի ունեցել: Օքսէն, այնուամենայնիւ, հարց է

տալիս. «արդեօք արեւելցի Տիգրանուսը եղել է ստրուկ»⁴: Ըստ Օքսէի, նա կարող էր ժամանել Իտալիա Ք.ա. 29 եւ 25 թթ. միջեւ⁵: Ինչ վերաբերում է Bargat(h)es-ին, Օքսէին չի յաջողուել պարզել նրա կողմից արհեստանոցը գլխաւորելու համաձայնքները (հաւանաբար՝ Tigranus-ի մահից յետոյ), այլ սահմանափակուել է արձանագրելով, որ այդ անունը «մատնում է» նրա արեւելեան ծագումը⁶:

Մի քանի տարի անց, Հանս Դրագենդորֆը Tigranus-ի եւ նրա յաջորդ Bargat(h)es-ի մասին առաջ քաշեց լրացուցիչ վարկածներ⁷: Հետեւելով Օքսէի դատողութիւններին, Դրագենդորֆը նոյնպէս ենթադրում էր, որ արեւելեան ստրուկների ներկայութիւնն այստեղ կապուած է Անտոնիոսի եւ Կլէոպատրայի դէմ Օկտաւիանոսի վարած պիքսանդրեան պատերազմի հետ: Այս վերակազմութիւնը մասամբ քննադատուել է Հ. Քոմֆորտի կողմից: Վերջինս ուշադրութիւն էր հրաւիրում այն փաստի վրայ, որ Արրեստիոսում օգոստոսեան ժամանակաշրջանը նշանաւորուեց մի էական փոփոխութեամբ՝ կատարուեց անցում սեւ խեցեղէնից կարմիր խեցեղէնի: Դրանով, հեղինակը զգուշացնում էր հետազոտողներին հեռու մնալ չափազանց դիւրաբեկ պատմական վարկածներից⁸:

Ջուզեպպէ Պուչչին, երեսուն տարի առաջ լոյս ընծայած իր հիմնաւոր յոդուածում չի անդրադառնում այդ երկու անձնաւորութիւնների ծագման հարցին, բայց ենթադրում է մասնազիտացած ստրուկների շուկայի գոյութեան մասին:

Իտալացի Հնագէտի կարծիքով, հէնց էգե-
 յեան Արեւելքի կենտրոններում էր, որ
 կարելի էր գտնել համապատասխան աշ-
 խատուժ, քանի որ այդ շրջաններում խե-
 ցեգործական արուեստի բնագաւառն ու-
 նէր դարաւոր աւանդոյթներ⁹: Այդուհան-
 դերձ, այս մեկնաբանութիւնը տեղին է,
 քանի որ ելնում է հնացած կանխակար-
 ծիքից, որը արեւելցիներին համարում է
 վատ արհեստաւորներ՝ եւ տեխնիկայի
 բնագաւառում անհմուտ, յամենայն
 դէպս՝ յոյների հետ համեմատած¹⁰:
 Bargat(h)es-ի անուանը Դրագենդորֆը
 վերագրում է «սեմական» ծագում: Աւե-
 լի ուշ, Պուչչին այդ անունը համարեց
 «արամէական»՝ չմանրամասնելով եւ,
 յատկապէս, չներկայացնելով որեւէ լե-
 զուաբանական հիմնաւորում¹¹: Հակառակ
 այս վարկածի, հայ հնագէտ Ժորես Խա-
 չատրեանը հայկական ծագում վերագրեց
 ոչ միայն Tigranus-ին, այլեւ Bargat(h)es-
 ին, վերջինս համարելով հայկական Բագ-
 րատ/Բագարատ անուան տարբերակ¹²:

Թէեւ Դրագենդորֆի վարկածը ներ-
 կայումս ամենաընդունելին է, կան գիտ-
 նականներ, որոնք ժխտում են արեւելեան
 վարկածը: Կարիք չկայ այս անձանց վե-
 րագրել արեւելեան ծագում, նկատի ունե-
 նալով, որ արեւմտեան ծագման բազմա-
 թիւ ստրուկներ ունէին արեւելեան ա-
 նուններ: Այսպէս է մտածում Հէյկի Սո-
 լինը, որպէս յունական դիտելով ոչ
 միայն Tigranes, այլեւ՝ Tigranus անու-
 նը¹³: Նոյն պատճառաբանութիւնը բերե-
 լով, Դ. Պ. Ս. Փիքորը եզրակացնում է,
 որ «արրետեան» սափորների արտադրան-
 քը լիովին տեղադրում է գեղարուեստա-
 կան արտադրանքի ընդհանուր հելլենիս-
 տական միտումների շրջանակում եւ, բա-
 ուիս բուն իմաստով, չի կարող ունենալ
 արեւելեան բնոյթ¹⁴:

Նախքան առաջ անցնելը, հարկ է

անդրադառնալ այս անձնաւորութիւննե-
 րի սոցիալական կարգավիճակի խնդրին:
 Սկզբնապէս, մասնագէտները Tigranus-ին
 դիտարկում էին որպէս ազատ կարգավի-
 ճակ ունեցող անձ: Իրականում, իտալա-
 ցիների գեղարուեստական ճաշակը յեղա-
 փոխելու նպատակով մի քանի ստրուկնե-
 րի հետ Արեւելքից եկած Tigranus-ի մա-
 սին վարկածը Օքսէի երեւակայութեան
 պտուղն էր: Հասկանալի պատճառներով,
 այս վարկածը որդեգրուեց հայ հնագէտ-
 ների կողմից, որոնք Tigranus-ի սոցիալա-
 կան առաջխաղացումը իտալիայում դի-
 տարկեցին որպէս փոքր արուեստի բնա-
 գաւառում հայերի առաջնայնութեան օ-
 րինակ¹⁵: Այս դէպքում, Tigranus-ը կա-
 րող էր լինել Perennius-ի (ոչ անպայմա-
 նօրէն տեղացի անձնաւորութեան) կլիեն-
 տը, որը որդեգրել էր նրան՝ հռոմէական
 քաղաքացիութիւն տալու նպատակով: Ի-
 րօք, բացառուած չէ, որ Պոմպէոսի եւ
 Տիգրանի միջեւ Ք.ա. 66 թ. կնքուած խա-
 ղադուութեան դաշինքից սկսած, հռոմէա-
 կան քաղաքացիները կարող էին բարե-
 կամական յարաբերութիւններ հաստա-
 տած լինել հայերի հետ: Բայց այդ կա-
 պերը հիմնականում հաստատուում էին
 բարձր խաւի անձանց միջեւ: Ես աւելի
 հակուած եմ ընդունել առաջին մեկնա-
 բանութիւնը, այսինքն, որ Tigranus-ը եւ
 Bargat(h)es-ը եղել են Պերեննիուսի ազա-
 տարձակները: Ի դէպ, բոլոր կասկածները
 պէտք է որ վերանան CIL VI, 23926 ար-
 ձանագրութեամբ՝ M. Pereni(o) M.I.
 Tigrano, որը Սոլինին թոյլ է տուել այս
 անձնաւորութեանը, առանց մեծ ուիսկի
 դիմելու, նոյնացնել Արրետիումի խեցե-
 գործի հետ¹⁶:

Կասկածի տակ առնելով Tigranus-ի
 ստրկական ծագումը, աւելի դժուար ենք
 համարում նրա գործառոյթները սահմա-
 նելու հարցը: Համաձայն հնագիտական

գրականութեան մէջ տարածուած, Օքսէից
 սկիզբ առնող տեսակէտի՝ Tigranus-ը կա-
 րող է աւելի շուտ «կառավարիչ», քան
 արհեստաւոր եղած լինել: Այդ դարաշը-
 ջանում սոցիալական այդպիսի անցումը
 միանգամայն հնարաւոր էր: Ինչպէս նշել
 է Ժան Անդրոն. «մասնագիտութիւնները
 եւ գործունէութեան բնագաւառները, ո-
 րոնք թոյլ էին տալիս բարձրանալ սոցիա-
 լական աստիճանով, կարող էին լքուել
 դրանք իրականացնող մարդկանց կողմից,
 եթէ չէին համապատասխանում այն
 խմբի աստիճանին, որի մէջ նորելուկը
 (կամ նրա ժառանգները) ցանկանում էին
 ներգրաւուել»: Անդրոն, որի ուսումնասի-
 րութիւնը վերաբերում է մասնաւորապէս
 դրամափոխներին, նշում է, որ այս մաս-
 նագիտութիւնները «երբեմն փոխանցում
 էին ազատարձակին, բայց ոչ երբեք նրա
 որդուն կամ ժառանգին»¹⁷: Նոյնպիսին է
 եւ արրետացի Պերեննիուսի դէպքը, որն
 իր անունը տուել էր ազատարձակներին
 եւ հարստացել էր խեցեղէնի արտադրու-
 թեան շնորհիւ: Ի դէպ, բացառուած չէ,
 որ Tigranus-ը սկզբում եղել է *servus*
communis (հանրային ծառայ)¹⁸: Այս
 դէպքում նա պէտք է որ ղեկավարէր խե-
 ցեգործական արհեստանոցը ի շահ մի
 խումբ գործատէրերի: Գուցէ աւելի հիմ-
 նաւորուած է Արտուրո Ստենիկոյի վար-
 կածը. «պէտք է կարծել... որ արհեստա-
 նոցի հիմնադիրը եղել է Մ. Պերեննիուսը՝
 գեղագիտական մեծ նրբագագացութեամբ
 օժտուած անձնաւորութիւն, ընդունակ եւ
 յաջողակ գործարար: [...] հէնց նրան
 պէտք է վերագրել իր իսկ արհեստանոցի
 հիմնումը, ինչպէս նաեւ մի աւանդոյթի,
 որն ունեցաւ մեծ կենսունակութիւն
 [...]»¹⁹:

Ուշադրութեան է արժանի Tigranus
 լատինական ձեւը: Հակառակ Սոլինի
 կարծիքի, աւելորդ չէ առանձին-առանձին

դիտարկել այս անձնանուան երկու տար-
 բերակները՝ լատինականացուած Tigranus-
 ր եւ յունականացուած Tigranes-ը, թէեւ
 երկուսն էլ սերում են Տիգրան-ից: Իրա-
 նական ծագում ունեցող այս անունը
 վկայուած է ինչպէս Պարսկաստանում,
 այնպէս էլ՝ Հայաստանում, բայց հանրա-
 պետութեան վերջին շրջանի հռոմէացի-
 ներն այն ընդունում էին որպէս հայկա-
 կան անուն: Դա վկայուած է Վարրոնի
De lingua Latina-ի մի հատուածում՝ նուի-
 րուած *ligris* բառի ծագումնաբանութեա-
 նը (5.100): Յիրաւի, հռոմէացի գիտնա-
 կանը ծանօթ է եղել *ligris* բառի նշանա-
 կութեանը իրանական լեզուներում
 («նետ», «սուր ծայր [զէնքի]»): Այդու-
 հանդերձ, նա այն համարում է հայերէն
 լեզուի բառապաշարի մէջ մտնող բառ:
 Հանրապետութեան մայրամուտին հռո-
 մէացիները գեռեւս չէին հասել Արեւելքի
 ամբողջական ճանաչմանը, եւ դրանով է
 բացատրւում իրաներէնի եւ հայերէնի
 միջեւ շփոթութիւնը նոյնիսկ մի այնպի-
 սի խոշոր գիտակի մօտ, ինչպիսին Վար-
 րոնն էր (որն իր լեմմային յաւելում էր
 Տիգրիս գետի մասին յիշատակումը): Ի
 դէպ, *ligris* լեմմայի վերագրումը աւելի
 շուտ հայերէնին քան իրաներէնին պայ-
 մանաւորուած է Հայաստանի մեծ արքա-
 յի՝ Տիգրան Մեծի, վերջին միհրդատեան
 պատերազմում Պոնտոսի հաւատարիմ
 դաշնակցի համբաւի ազդեցութեամբ, քա-
 նի որ Տիգրանի ենթարկումը, Արեւելքում
 Պոմպէոսի ռազմարշաւի ամենափառաւոր
 էջերից մէկը, մեծ արձագանգ էր գտել
 հռոմէական պատմագրութեան մէջ²⁰:

Իրականում, Tigranus-ը հայերէն
 Տիգրան ձեւի ուղղակի թարգմանութիւնն
 է՝ առանց յունարէնի միջամտութեան:
 Մի սերունդ անց, Bargat(h)es-ը կրում է
 յունականացուած անուանաձեւ, քանի որ
 Ք.հ. I դարի սկզբին լատիներէնը կանո-

նակարգել էր արեւելեան անուանածեւերը, իսկ յունարէնը դարձել էր անշրջանցելի միջնորդ, ինչը հաստատում է Արեւելքում այդ լեզուի *lingua franca* լինելու իրողութիւնը²¹: Բայց Tigranus-ի օրօք, քանի դեռ չէին հաստատուել օգոստոսեան գաղափարախօսական ստանդարտները, արեւելեան անուան ուղղակի լատինականացում դեռեւս հնարաւոր չէր: Իմ կարծիքով, այս ցուցիչն անտեսել չի կարելի, քանի որ այն մատնանշում է շատ ինքնատիպ ռազմավարութիւն յատուկ անունների բնագաւառում: Պէտք է ասել, որ հին Հայաստանում հելլենիզմը ներկայ էր ինչպէս գրականութեան, այնպէս էլ գեղարուեստի բնագաւառում, բայց յունարէնի իմացութիւնը սահմանափակում էր հասարակութեան ակելի բարձր ոլորտներում²²: Tigranus-ն, ուրեմն, կարող էր Իտալիա հասած լինել ուղղակի իր Հայրենիքից, անշուշտ որպէս ստրուկ՝ քաղաքացիական պատերազմների ակարտից, կամ թէ՛ Մարկոս Անտոնիոսի արեւելեան արշաւանքից յետոյ ինչ-որ ռազմարշաւի ընթացքում գերեվարուած: Սակայն նրա՝ որպէս արհեստանոցի պետի, գործունէութիւնը հնարաւոր չէ թուազրել Ք.ա. 15 թուականից սկսած՝ ինչպէս ցանկանում է Քրիստիան Գուդիոնոն: Պուչչին իր ժամանակին քննադատել է այս դիտարկումները, բայց, միեւնոյն ժամանակ, նա չի գտել բաւարար ցուցիչներ Tigranus-ի արտադրանքը Ք.ա. շուրջ 30 թ. թուագրելու համար, ինչն ակելի հաւանական է թուում²³:

Ինչ վերաբերում է Bargat(h)es-ին, ապա այս անուանը հանդիպում ենք բազմաթիւ լատիններէն արձանագրութիւններում: Բայց դրանցից միայն մէկն է վկայում այդ անձի ծագման մասին. հեծեալ Բարգաթես, իտուրական տոհմից

(Bargathes, domo Itryaeus) (sic). CIL 111, 4371²⁴: Մենք, փաստօրէն, գործ ունենք մի սեմական անուան հետ, ինչպիսին Bargad/՛ ձեւով վկայուած է Դուրա Եւրոպոսի արձանագրութիւններում: Ուրեմն, խօսքը վերաբերում է մի անուան, որը ձեւաւորուել է *bar-Gad* «Գադի որդի» Հայրանունից²⁵: Բայց եթէ այդ ստուգաբանութիւնը հնարաւոր է, ապա չենք հասկանում, թէ ինչո՞ւ Արեւելքում Bargad/՛ անունը վկայուած է միայն Դուրայում եւ CIL III, 4371-ի իտուրական հեծեալի դէպքում, մինչդեռ հռոմէական Արեւմուտքում ունենք Bargat(h)es-ի մի ամբողջ շարք: Փոխարէնը, կան կայսերական ժամանակաշրջանի բաւական շատ արձանագրութիւններ՝ յայտնաբերուած սիրիա-արաբական տարածաշրջանի բազմաթիւ վայրերում, որոնցում հանդիպում ենք *bgrt/bjrt*, յունականացուած՝ Βαγρατος (տարբերակ՝ Βαγραθος) անուանը, որը սեմականացնելուն հակուած գիտնականները այն դիտում են որպէս արաբական անուն՝ «պորտ» իմաստով²⁶: Bargad/՛ > Bargat(h)es ձեւը կարող էր գրափոխութեան արդիւնք լինել, ինչը սովորական երեւոյթ է: Հռոմէացիներն, ըստ երեւոյթին, սկզբում ծանօթ են եղել անուան այս տարբերակին, այնուհետեւ «նորմաւորել են» նաեւ միւս ձեւերը, ինչով եւ հնարաւոր է բացատրել լատինական անուանաբանութիւնում Bargat(h)es ձեւի յարաբերական նոյնակերպութիւնը:

Բանավէճը, սակայն, փակուած չէ, քանի որ այս՝ ակնյայտօրէն սեմական անունը նման է Բագրատ/Բագարատ-ին՝ իրանական թէոֆորիկ *Baga-dāta (պարթ. Bag(a)dāt, յուն. Βαγαδάτες²⁷) անուան Հայկական տարբերակին: Ի դէպ, ինչպէս նկատել է Կիրիլ Թումանովը, միհրդատեան վերջին պատերազմի ժամանակ եղել է ոմն Բագարատ (Ապպիանոսի մօտ՝

Βαγαδάτες, Syr. 48.248), որին Տիգրան Մեծը նշանակել էր Ասորիքի կառավարիչ: Այս Բագարատ Փառնաւազեանի անունը վկայուած է V դարի մի ժամանակագրութեան մէջ, որը գիտնականներն անուանում են Նախնական Պատմութիւն²⁸: Թէեւ մենք չենք կարող հաստատուել այսպէս կարգել Bargat(h)es անուան ծագումը, պէտք է ենթադրել, սակայն, որ այն տարածուած է եղել ինչպէս Հայաստանում, այնպէս էլ սեմական Մերձաւոր Արեւելքում²⁹: Գուցէ, ինչպէս առաջարկել է Ժ. Խաչատրեանը, Արրեսիոնի Bargat(h)es-ը, ինչպէս եւ Tigranus-ը, եկել է Հայաստանից: Չի կարող *a priori* բացառուել նաեւ Tigranus-ի եւ նրա յաջորդ Bargat(h)es-ի միջեւ ինչ-որ կապի, անգամ՝ ազգակցական կապի, հնարաւորութիւնը, բայց ակելի լաւ է զգուշաւորութիւն ցուցաբերելով՝ սահմանափակուել այն կոնկրետ տուեալներով, որ մենք ունենք³⁰:

Ամէն դէպքում, այդ տուեալները անտեսել չի կարելի, քանի որ, ինչպէս նկատել է Իրոն Կայանտոն, ազգանունների ընդհանուր քանակում «բարբարոսական» ազգանունները բաւական քիչ էին³¹: Ինչ վերաբերում է գրաւոր խօսքին՝ Հռոմը երկլեզու քաղաք էր: Ըստ Կայանտոյի, մայրաքաղաքի փողոցներում յունարենից բացի կարելի էր լսել ուրիշ բազմաթիւ օտար լեզուներ³²: Այնուամենայնիւ, չհաշուած բացառութիւնները, այն ամէնը, ինչը լատինական կամ յունական չէր, այսպէս ասած, յետ էր մղում: Այդ վիճակը լաւ արտացոլուած է Պետրոնիոսի Սատիրիկոնի մէջ՝ Տրիմալխոնի խօսքերում: Այդ ազատարձակը, որի անունը մտածել է տալիս սեմական լեզուական ոլորտին նրա պատկանելութեան մասին, հպարտօրէն յայտարարում է. «ես երեք գրադարան ունեմ. մէկը՝

յունական, միւսը՝ լատինական»³³: Մրանով Պետրոնիոսն արտայայտում է արիստոկրատների վերաբերմունքը Հռոմում եւ Իտալիայի քաղաքներում եղած բոլոր արեւելցիների ու բարբարոսների նկատմամբ, լինէին դրանք ազատներ, ազատարձակներ կամ ստրուկներ³⁴: Հռոմէական մշակոյթի մէջ նրանք տեսանելի չէին: Սա հասկանալի հակազդեցութիւն էր օտարերկրացիների եւ, Տակիտոսի խօսքերով, «ստրկութեան մէջ գտնուող ազգերի» (*nationes in famillis, Ann. 14.44*) ներկայութեան աղետալի հետեւանքների նկատմամբ:

Ֆրանսէրէն քննարկից թարգմանեց
Ռուբէն Վարդանեանը:

ՇԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

- 1 A. Stenico, *Perennius, Marcus*, Enciclopedia dell'arte antica, classica e orientale, vol. VI, Roma 1965, pp. 33-36. St'u Gwta՝ G. Pucci, *Terra sigillata italica*, Enciclopedia dell'arte antica, classica e orientale. Atlante delle forme ceramiche, vol. II, Roma 1985, pp. 365-406.
- 2 H. Dragendorff, *Arretinische Reliefkeramik mit Beschreibung der Sammlung in Tübingen*, Reutligen 1948, pp. 31 sqq.; 54 sqq; F. P. Porten Palange (խմբագիր). M. Perennius Bargathes. Tradizione e innovazione nella ceramica aretina, Catalogo della Nostra, Roma 1984.
- 3 St'u Pucci, Գ2. աշխ., F. P. Porten Palange, *Una produzione poco nota della prima fase dell'officina aretina di M. Perennius*, Numismatica e antichità classiche (Quaderni Ticinensi), N 24 (1995), 257-276. Արճեստանցի առաջին փուլի մասին տե՛ս Գոյնի M. Perennius e M. Perennius Tigraniv, G. Cavalieri Manasse եւ E. Roffia (խմբագիրներ). *Splendida Civitas Nostra. Studi archeologici in onore di Antonio Frova* գրքում, Roma 1995, pp. 391-397.
- 4 A. Oxé. *Arretinische Reliefgefäße vom Rhein*, Frankfurt, 1933, p. 29.
- 5 Oxé, Գ2. աշխ., էջ 30:
- 6 Oxé, Գ2. աշխ., էջ 33: Օքսէն յեմում էր Tigranus-ի արեւելեան ծագման վրայ՝ պաշտպանելու համար *terra sigillata*-ի «արեւելեան» ծագման մասին իր վարկածը: Tigranus ձեւը վկայուած է Gwta Հռոմում (*Corpus Inscriptionum Latinarum*

այսուհետև CIL/ 6, 8872; 27415) եւ Իտալիայում (*L'Année épigraphique* /այսուհետև/ AE/ 1992. 243. *Atina*; AE 1999, 71), Ցիզապիոնում (սեռական հոլ. *Tigrani*: CIL V, 2540, *Ateste*), հարաւային Գալիայում (սեռական հոլ. *Tigrani*: AE 1987, 764 եւ 1989, 503, *Forum Iulii*) եւ Իսպանիայի Իտալիկայում (*CIL* 2, 347): Գերմանական լիմեզից յայտնի է մէկ ուրիշ *Tigranus*' ուն ապաշար հեծեալ *Maris*-ի եղբայրը, որի Ի դարով թուագրուող տապանասիւնը պահում է Մայնցի թանգարանում. AE 1959, 188 = AE 1967, 339: Այս զինուորականը ծառայում էր *XXX ala Parthorum et Araborum turma*-ում. նրա եղբոր անունը *Variagnis* էր (տե՛ս հայերէն *Վարագն* !): **W. Selzer**, *Römische Steindenkmäler*. Mainz in Römischer Zeit, Mainz 1988, p. 158. Յայտնի է նաեւ մէկ այլ *Tigrana*: AE 1977, 175 (*Ostia*).

7 **H. Dragendorff**, *Firmenstempel und Künstlersignatur auf arretinischen Reliefgefässen*, Festschrift für August Oxézum 75. Geburtstag. 23 Juni 1938, Darmstadt 1938, pp. 1-8.

8 **H. Comfort**, *Terra sigillata*, **T. Frank**, *An Economic Survey of Ancient Rome* գրքում, vol. V, Baltimore 1940, pp. 188-194:

9 **G. Pucci**, *La produzione della ceramica aretina. Note sull "industria" nella prima età imperiale romana*, *Dialoghi di Archeologia* 7 (1973), pp. 225-293: Տե՛ս նաեւ նոյն հեղինակի *La ceramica italica (terra sigillata)*; A. Giardina եւ A. Schiavone (խմբագիրներ). *Società romana e produzione schiavistica* գրքում, vol II: *Merci, mercati e scambi nel Mediterraneo*, Roma-Bari 1981, pp. 99-121 եւ 275-277, նոյնի *La ceramica aretina: "imagerie" e correnti artistiche, L'art décoratif à Rome à la fin de la République et au début du Principat* գրքում, *Actes de la table ronde*, Rome 1981, pp. 101-119; նոյնի I bollis sulla *terra sigillata*: fra epigrafia e storia economica; W.V. Harris (խմբագիր). *The Inscribed Economy. Production and Distribution in the Roman Empire in the Light of Instrumentum Domesticum* գրքում, *Journal of Roman Archaeology Suppl.* N 6, Ann Arbor (Mi.) 1993, pp. 73-79; նոյնի Prefazione; **D. P. S. Peacock**, *La ceramica romana tra archeologia e etnografia* գրքում, իտալերէն հրատարակութիւնը, Bari 1997, pp. IX-XVI.

10 Տե՛ս, օրինակ, **V. Chapot**, *Les destinées de l'Hellenisme au delà de l'Euphrate*, *Mémoires de la Société des Antiquaires de France*, N 7.s., 3 (1904), pp. 207-296. Այս կապակցութեամբ լղում եմ իմ յօդուածը՝ *Hellenism in the East: Some historiographical Remarks*, *Electrum*, N 6 (2002), pp. 15-24:

11 **H. Dragendorff**, *Firmenstempel...*; **G. Pucci**, *La ceramica aretina: "imagerie"...*, p. 102; **F.P. Porten Palange** (խմբագիր), **M. Perennius**

Bargathes: Պուշչին, անշուշտ. մտածել է bar- «որդի» բառով կազմուած հայրանուն մասին. բայց ինչպէս կը տեսնենք, դա. հաւանաբար, պարզունակ ընթերցում է: Ի դէպ, այս վարկածը գիտնականի միւս աշխատութիւններում այլեւս չի յայտնուել:

12 **Zh. Khachatryan**, *Artaxata capitale dell'Armenia antica (II sec. a.C.-IV d.C.)*, A. Invernizzi (խմբագիր), *Ai piedi dell'Ararat e l'Armenia ellenistico-romana* գրքում, Firenze 1998, pp. 9-158, մասնատրապէս՝ էջ 125: Ըստ այս հեղինակի, հետեւելով Օքսէի տրամաբանութեանը (A. Oxé. *Arretinische Reliefgefässe...*), «Տիգրանը» կարող է արհեստանոցի տէրը եղած լինել, իսկ «Բագրատը»՝ արհեստաւոր:

13 **H. Solin**, *Die Griechischen Personennamen in Rom. Ein Namenbuch*, vol. I, Berlin-New York 2003, S. 242 sq.: Հոռոմում եօթ անգամ վկայուած երկու տարբերակները (չհաշուած *Inscriptiones Christiane Urbis Romae* 10872d) այսպիսով նոյնպէս դասում են «արեւելեան տիրակալներին» *cognomina* շարքում՝ Կիրոսի եւ Միհրդատի օրինակով: Տե՛ս նաեւ նոյնի *Beiträge zur Kenntnis der griechischen Personennamen in Rom*, Helsinki-Helsingfors 1971, pp. 62-63:

14 **D. P. S. Peacock**, *La ceramica romana...*, pp. 143-144.

15 **Zh. Khachatryan**, *Artaxata...*, p. 125.

16 **H. Solin**, *Die Griechischen Personennamen...*, p. 231: wohl identisch mit XV 5623. Արձանագրութիւնը, աճիւնասափորի վրա գրուած, յայտնաբերուել է Հոռոմում 1853 թ., Սբ. Պանկրատիոսի դարպասի քանդման աշխատանքների ժամանակ: Յայտնաբերումից քիչ անց աճիւնասափորն անհետացել է, բայց, բարեբախտաբար, հնագէտ Ջիովան Բատիստա Դե Ռուսին այն արտագրել էր: *Corpus Inscriptionum Latinarum*-ում Մոմզենն առնչութիւն է տեսնում սրա եւ **M. Perennius Hermadion**-ի (*CIL* VI, 23926a) տապանասեան միջեւ. վերջինիս ծագումը պարզ չէ: Այնուամենայնիւ, այդ կապն ակնյայտ չէ:

17 **J. Andreau**, *Activité financière et liens de parenté en Italie romaine*, *Parenté et stratégies familiales dans l'antiquité romaine* գրքում, Roma, 1990, pp. 501-526.

18 Հարցի մասին ամբողջութեամբ տե՛ս **J.-J. Aubert**, *Business Managers in Ancient Rome. A Social and Economic Study of Institores*, 200 B.C. – A.D. 250, Leiden-New York-Köln, 1994.

19 **A. Stenico**, *Aretini, vasi*, *Enciclopedia dell'arte antica, classica e orientale*, vol. I, Rome, 1958, pp. 608-616 (612). **G. Pucci**, *La ceramica italica*, p. 102. **M. Perennius** եւ **M. Perennius Tigranus** կապի մասին տե՛ս **F. P. Porten Palange**, *M. Perennius e M. Perennius Tigranus*: Հեղինակը ներկայացնում է հարցի պատմութիւնը՝ առաջնորդուելով Օք-

սէի եւ Դրագենորֆի մշակած աւանդական վարկածով. սակայն չի անդրադառնում *Tigranus*-ի ծագման խնդրին:

20 **M.-L. Chaumont**, *L'expédition de Pompée le Grand en Arménie et au Caucase (66-65 av. J.C.)*, *Quaderni Catanesi*, N 6, 1984, pp. 17-94, 24.

21 **I. Kajanto**, *Minderheiten und ihre Sprachen in der Hauptstadt Rom*, *Die Sprachen im römischen Reich der Kaiserzeit* գրքում, Köln-Bonn, 1980, pp. 83-101.

22 Լեզուական վիճակի վերաբերեալ տե՛ս **R. Schmitt**, *Die Ostgrenze von Armenien über Mesopotamien, Syrien bis Arabien*, *Die Sprachen im römischen Reich der Kaiserzeit* գրքում, Cologne-Bonn, 1980, pp. 187-214, տե՛ս նաեւ **G. Bolognesi**, *La tradizione culturale armena nelle sue relazioni col mondo persiano e col mondo greco-romano*, *La Persia e il mondo greco-romano* գրքում, Rome, 1966, pp. 569-604. **Г. Х. Саркисян**, *Черты эллинизма в духовной культуре древней Армении*, ՊՐԸ, 1976, թիւ 3, էջ 51-60 (տե՛ս նաեւ նախնական տարբերակը՝ *Проблемы античной истории и культуры, XIV международная конференция античников социалистических стран "Эйрене"*, Ереван 1976 (18-23 мая). Тезисы докладов, Ереван, 1979, том I, стр. 18-24. Հարցը հնագիտական տեսակետից քննարկուած է **Г. А. Тирация**, *Культура древней Армении, VI в. до н.э. – III в.н.э. (по археологическим данным)*, Ереван, 1988 (խեցեգործութեան մասին տե՛ս էջ 118-136):

23 **Ch. Goudineau**, *La céramique arétine lisse*. Fouilles de l'écôle Française de Rome à Bolsena (Poggio Moscini), 1962-1968, vol. IV, Paris, 1968; **G. Pucci**, *Terra sigillata italica*, p. 376: «Եթէ ամբողջ գեղագարդուած խեցեղէնը սկիզբ առած լինէր քիչ աւելի ուշ, կարող էինք աւելի լաւ բացատրել, թէ ինչո՞ւ այն ունի ոչ միայն գեղագիտական, այլեւ տեխնիկական շատ բարձր որակ: Հակառակ դէպքում, խօսքը կարող է վերաբերել, ասենք, շուրջ 30 թ. թուագրուող շատ լաւ որակի գեղագարդուած արտադրանքի մասին»:

24 Արրետիումի խեցեգործից բացի տե՛ս *CIL* VI, 5684 եւ 5685, 13716, 16168, 18875, 23014, 25219, 25318, 26312, 26361, 29450 (Roma); AE 1990, 75 (Roma); *CIL* 14, 4865; AE 1999, 646 (Ariminum); *CIL* XIV, 5182; AE 1928, 135 (Ostia), AE 1975, 202 (Telesia); AE 1991, 575 եւ *Supl* 9, 150 (Amitemum); *CIL* XII, 4886 եւ 4895 (Narbo); *CIL* II, 286 (Jerica); AE 1951, 270 (Banasa); տե՛ս նաեւ Կիւմետում (*CIL* X, 8214) եւ, գուցէ, Հերկուլանումում (*AE* 1991, 466) վկայուած *Barcates* ձեւը:

25 **H. Wuthnow**, *Die semitischen Personennamen in griechischen Inschriften und Papyri des vorderen Orients*, Leipzig, 1930, S. 33, իսկ անուան վերլուծութեան մասին՝ S. 132:

26 **J. K. Stark**, *Personal Names in Palmyrene Inscriptions*, Oxford, 1971, p. 74; նաբատէրէն տեքստերի վերաբերեալ (թուագրուած՝ Բ.հ. 34/35-ից մինչեւ 105/6 թ.) տե՛ս **U. Hackl**, **H. Jenni** եւ **Ch. Schneider** (խմբագիրներ). *Quellen zur Geschichte der Nabatäer*, Göttingen, 2003, p. 141 sq., p. 308, 324-327, եւ մատենագրութիւնը: Յուճարէն արձանագրութիւնների վերաբերեալ տե՛ս **H. Wüthnow**, *Die semitischen Personennamen...*, p. 31; տե՛ս նաեւ նոր արձանագրութիւնը, հրատարակուած՝ **C. Saliou**, *Une épitaphe de Harran el Awamid*, *Zeitschrift für Papyrologie und Epigraphik*, N 122 (1998), pp. 102-104: Սիրիայից դուրս, *Bagarat/Bagrat/Bargathes* անունը հնչումային նմանութեան պատճառով միաձուլուել է յունական *Pankrates* անունին:

27 **H. Hübschmann**, *Persische Studien*, Strasbourg, 1895, p. 201; *Armenische Grammatik*, I. *Armenische Etymologie*, Lipsie, 1897, p. 31 no. 34. Պակաս համոզիչ մի ստուգաբանութիւն ներկայացրել է **F. Justi**, *Iranisches Namenbuch*, Marburg, 1895 (վերահրատարակուած՝ Hildesheim, 1963), "Bagarat", S. 57 sq.: "Freud Gottes (?; gebildet mit Ariathes)": Տե՛ս նաեւ **C. Toumanoff**, *Studies in Christian Caucasian History*, Washington, 1963, p. 198 n. 223; **Ph. Gignoux**, *Noms propres sassanides en moyen-persé Épigraphique* (*Iranisches Namenbuch* II.2), Vion, 1986. Հայաստանում այս անուն տարածուածութեան մասին տե՛ս **Հ. Աճառեան**, *Հայ անձնանունների բառարան*, հտ. I, Երեւան, 1942, էջ 355-359:

28 **C. Toumanoff**, *Studies in Christian...*, pp. 313-318. Նախնական պատմութեան մասին գրականութիւնը տե՛ս **R.W. Thomson**, *A Bibliography of Classical Armenian Literature to 1500 AD*, Turnhout, 1995, pp. 188-189: Պէտք է ուրեմն ուղղում մտցնել՝ **K. Brodersen**, *Appians Abriss der Seleukidengeschichte*, München, 1989, S. 77 sq., ըստ որի իրանեան անունով այս անձը կարող էր յիշատակուած լինել միայն Ապպիանոսի կողմից: Տե՛ս նաեւ **H. Manandian**, *Tigrane II et Rome*, Lisboa, 1963, p. 45, 49:

29 Ըստ հայկական աւանդութեան, Բագարատը համարում է երբայական ծագում ունեցող անուն: Այս անունն է կրել Բագրատունիների ազնուական տոհմը, որը Հայաստանում իշխել է VIII դարից սկսած: Համաձայն Մովսէս Խորենացու (I.22), Բագրատունիները երբայական ծագում ունէին, ինչը բացատրուած չէ, նկատի ունենալով, որ Տիգրան Մեծի իշխանութեան օրօք Պաղեստինից Հայաստան են բռնագաղթուել բազմաթիւ հրեայ ընտանիքներ, **J. Neusner**, *A History of the Jews in Babylonia*, vol. I: *The Perthian Period*, Leiden, 1965: Մովսէս Խորենացին *Բագարատ* անունը սերուած է համարում

առասպելական *Բագարիա* նախնու անունից (2.64), C. Toumanoff, *Studies in Christian...*, p. 327: Վրաստանի Բագրատունիների վերաբերող մի առեղծվածի ուղիղ առաջնություն, Կոնստանտին Միրանաձեի կողմից լիշատակում, այդ տոհմին նույնպես վերագրում է հրեական ծագում՝ Դավիթ թագաւորից սերնած (De administrando imperio, XLV, 2.8), տե՛ս J. Markwart, *Der Ursprung der iberischen Bagratiden*, Osteuropäische und Ostasiatische Streifzüge գրքում, Lipsie, 1903, S. 391-436: Տե՛ս նաև Ա. Շահինազարեան, *Բագրատունեաց նախարարական տոհմի ծագումը*, ՀՊՊԹ «Աշխատություններ» հտ. I, Երևան, 1948, էջ 167-212, C. Toumanoff, *Studies in Christian...*, p. 327, N: G. Garsoïan, *The Epic Histories Attributed to P'awstos Buzand (Buzandaran Patmut'wnk')*, Cambridge Mass., 1989, pp. 362-363:

30 Պրոֆեսոր Ռիդիգեր Շմիտը 2004-ի մարտի 18-ին ինձ լղած նամակում սիրալիորէն տեղեկացրեց իր հետեւեալ դիտարկումների մասին. Die Form mit – r – (aus parth. –d-) ist nun typisch armenisch, und für einen armenischen Namen in

Italien wäre natürlich griechische Vermittlung anzunehmen. Aber im Griechischen fehlen Zeugnisse für *Bagrat* bzw. Mit·Metathese *Bargat*: Պրն. Շմիտն այն առեղծվածի շուտ համարում է սեմական անուն:

31 Տե՛ս M. Bang, *Die Herkunft der römischen Sklaven*, Römische Mitteilungen, N 25 (1910), S. 220-251 դասական աշխատությունը:

32 I. Kajanto, *Minderheiten und ihre Sprachen...*, p. 84.

33 Petron, 48: tres bibliothecas habeo, unam Graecam alteram Latinam. Տե՛ս P. Vidal-Naquet, *Du bon usage de la trahison* (préface à Flavius Josèphe, La guerre des Juifs, tr. par P. Savinel, Paris 1977), pp. 17-18; G. Traina, *Il complesso di Trimalcione*, Venezia, 1991, pp. 3-8.

34 M. Bang, *Op. cit.*, p. 31 ներկայացրած ցուցակում հաւաքում են ստրուկների աշխարհագրական ծագման մասին վստահաբար վկայում բոլոր տեքստերը, բայց ընտրությունը բաւական պատահական է ընդհանուր եզրակացություններ անելու համար:

ԴՐՈՒԱԳ ՔՐԻՍՏՈՍ ԷՄՄԱՆՈՒԷԼԻ ՊԱՏԿԵՐԸ ԿՐՈՂ ՄԵԴԱԼԻՈՆՈՎ
ՏԻՐԱՄՕՐ ՊԱՏԿԵՐԱԳՐՈՒԹԻՒՆԻՑ

Էդդա Վարդանեան

Տիրամօր պատկերման հազուագիւտ եւ հետաքրքրական մանրանկար ունի Մաշտոցի անուան Մատենադարանի 4997 Մաշտոց ծիսարանը, յայտնի՝ Վաղարշապատի Մաշտոց անուան տակ¹: Մաշտոցը պատկանում է Կաթողիկոսական կոչուող տիպին եւ խորագրուած է՝ «Մաշտոց օրհնութեան սրբալոյս միւռոնի, Եպիսկոպոսի եւ կաթողիկոսի ձեռնադրութեան եւ օծման թագաւորի»: Այն ընդօրինակուել է 1461 թ. Վաղարշապատում, Զաքարիա Գ. Աղթամարցի կաթողիկոսի պատուէրով, որն այդ տարիներին զբաղեցրել է Աղթամարի եւ Էջմիածնի կաթողիկոսական աթոռները:

Մաշտոցը բովանդակում է կաթողիկոսական չորս կանոնները՝ Եպիսկոպոսաւրհնէք (3ա-50ա), Կանովն յորժամ կաթողիկոս ձեռնադրեն ամենայն Հայոց (51ա-74բ), Մեռնօրհնէք (76ա-111բ), Կանովն եւ կարգաւորութիւն աւրհնութեան թագաւորի ըստ մեծի եկեղեցոյն (112ա-132բ)²: Զեռագիրն ունի հինգ մանրանկար, կատարուած փայլուն վարպետութեամբ: Առաջինը «Քրիստոս Էմմանուէլի պատկերը կրող մեղալիոնով Տիրամայրն» է (2բ), միւսները՝ «Եպիսկոպոսի ձեռնադրութիւն» (11բ), «Կաթողիկոսի ձեռնադրութիւն» (52բ), «Մեռնօրհնէք» (75բ), «Թագաւորի օծում» (112բ), նախորդում են կանոններին: Իրենց նախօրինակը չունեցող, այս ծիսական մանրանկարները կաթողիկոսական կանոնների նկարազարդման բացառիկ օրինակներ են³: Մատենանը բացող Տիրամօր պատկերն առանձնայատուկ տեղ է գրաւում ձեռագրի գեղարուեստական

յարդարանքի համակարգում: Նրա պատկերազրութեան դաւանաբանական եւ գաղափարական իմաստը, տուեալ ծիսարանի կոնտեքստում, մեծ հետաքրքրութիւն է ներկայացնում:

Տիրամայրը պատկերուած է հասակով մէկ կանգնած: Կրծքի առջեւ, երկու ձեռքով, բռնել է Քրիստոս Էմմանուէլի պատկերը կրող կլոր վահանակ՝ մեղալիոն: Տիրամօր երկու կողմերում գտնուող քառախորան վարդեակներում «Աստուածածին» եւ «Մայր Աստուծոյ» մակազրութիւններն են: Վերելի երկու անկիւններում՝ երկնքի սեզմենտից դուրս եկող հրեշտակներ խոնարհուում են, ձեռքերը պարզած օրհնութեան շարժումով (նկ. 1):

Աստուածամօր պատկերման տուեալ տարբերակը հազուագիւտ է հայկական արուեստում: Նրա պատկերազրութեան ակունքները տանում են դէպի 6-8-րդ դարերի «Գահին նստած Աստուածամայրը մանկան հետ» արեւելեան հնագոյն այն պատկերները, որոնցում մանուկ Քրիստոսը շրջապատուած է օվալաձեւ ճաճանչապսակով (մանդորլայով): Յաղթական բնոյթի այդ պատկերները արտայայտում են Աստուծոյ Մարդեղութեան յայտնութեանական էութիւնը, կամ, Ա. Գրաբարի խօսքերով, «Աստուծոյ ներկայութիւնը Քրիստոսի կերպարանքով»⁴: Դրանցից են ղպտական Բաուլիտ վանքի (6-րդ դ.) եւ Հոռմի Սանտա Մարիա Անտիկուա եկեղեցու (8-րդ դարի կէս) որմնանկարները, Փարիզի ազգային գրադարանի 7-8-րդ դդ. ասորական մանրանկար